

շուառ աղքատացն Դաւրիժոյ, թէ տեղական և թէ եկացն գողթելոց յԱսպահանայ վիճակաց, զոր ասպնջականել խնդրեմ յազգաշահ էջ պատուական Արարատիդ:

է դիմաց մասնագործոյ:

Արարատից Անդրեասեան

Ի 1 յունիս 1872 թ.

Ի Դաւրիժ.

ՄԱՅՐԵՆԻ ԼԵՂՈՒ

Համարեա ամենքին յայտնի է, թէ մեր մէջ ամենայն տեսակ սկզբնական դասադրքերի կողմից ի նշագէս մեծ կարօտութիւն, կամ լաւ է ասել՝ սով կայ. որքան հազարաւոր երեխաներ խմում են այդ դառն բաժակը՝ այս ու այն առարկայի համար, բազմիցս անձակ դասեր արտագրելով անթիւ սխալներով լի, և իրանց թանկագին ժամանակը մէքենական աշխատութեան մէջ փռացնելով, ու վերջապէս, քանի քանի ուսուցիչներ վճատվում, յուսահատվում են իրանց ծանր պաշտօնը բարեխղճութեամբ կատարելու համար անհրաժեշտ հարկաւոր միջոցները չունենալով: Արժապետները ստիպուած ու պարտաւոր են երեխաներին ուսում տալու, լուսաւորելու, կատարեալ մարդիք շինելու, բայց ի՞նչպէս, ի՞նչ միջոցներով — այդ հարցնող չկայ: Երեխաներն էլ իրանց կողմից՝ պէտք է գիշերը ցերեկ անեն, լուսաւորութիւն ստանան, բայց ի՞նչպէս, ի՞նչ միջոցներով — դարձեալ հարցնող չկայ:

Այս դրութեան մէջ ինքն իրան հասկացվում է, որ մեր մանկավարժական գրականութեան մէջ իւրաքանչիւր մի նոր երեւոյթ ունի խորին խորհուրդը, ու այդպիսիները՝ նոր սերնդի տարրական լուսաւորութեան հիմքերը լինելով՝ պէտք է հիմնաւորապէս փորձուէին արդար քննութեան բովարտ: Այդ տեսակ երեւոյթների մասին հարեանցի քննութիւնները, րնծայութիւնները (рекомендация) և ակնարկութիւնները եղած թէ չեղած — մի և նոյն են:

«Մշակ» լրագրի 3 թում Պ. Ս. Պ. տպել էր մի յօդուած՝ Պ. Պ. Ն. Տէր — Յակովբեանցի և Ն. Տէր — Առնոգեանցի «Մայրենի լեզու» գրքոյնների մասին, որն որ, պիտի ուղիղն ասել, ոչ հիմնաւոր քննութիւն, այլ լոկ մատնացուցութիւն է միայն Գիտելով՝ որ այսպիսի աշխատութիւնները ոչ թէ մի ժանիսի, այլ շատերի քննութեանը կարօտ են՝ աւելորդ չենք համարում մի քանի խօսք էլ մեր կողմից ասել Պ. Տէր — Առնոգեանցի գրքոյնի մասին, թողելով

Տէր — Յակովբեանցին, որը առհասարակ շատ քիչ նշանակութիւն ունի դպրոցների համար: Բայց ամենից առաջ դեռ մի քանի խօսք:

Սկզբնական դասադրքի, որպէս և ամենայն բանի հիմքի կամ սկզբնաւորութեան մէջ շատ մեծ խորհուրդ ունի մէկ աննշան պակասութիւնն էլ. այս տեղ զործը հում խնկրելի — 6 — 10 տարեկան երեխաների հետ է, որոնք անընդունակ են սեր տեսնելով՝ սպիտակը ուսանել կամ սխալ լսելով՝ ուղիղը սովորել. նրանք խիստ հաւատարիմ են իրանց տեսած ու լսածը առանց քննութեան նոյնութեամբ սեպհականացնելու, կարծեանք՝ նրանք չեն կարող ուրիշ բան գիտնել: Եւ «ռեկտ» (объяснительность): Դիցուք թէ դասադրքի ընթացքում կան մի քանի տառ տառախալներ, կամ զործածուած են խորթ և անուղիղ ոճեր, կամ յայտնուած են մի քանի սխալ հասկացողութիւններ, դասի ժամանակ ի՞նչպէս անես, ի՞նչպէս հասկացնես երեխային, որ այս ինչ պիտի այսպէս չը լինէր, այլ ուրիշ կերպ, կը հասկանա՞ւ և կ'սեպհականացնէ՞ նա այդ ասածը, երբ աչքի առաջի տեսնումէ ուրիշ կերպ գրած. շատ դժուար: Այլքան անհամար վատ հետեւանքներ են առաջանում, երբ ուսուցիչը փոխանակ դասադրքի միջնորդութեամբ երեխային զարգացնելու՝ սկսումէ նորա առաջին ամենայն օր այդ դասադրքի վերայ քննութիւն անել՝ նորա թերութիւնները ցոյց տալով: Եւ այս ոչ մի քանի, այլ հազարաւոր երեխաների համար է. բաց ի նրանց՝ միթէ դասադրքի բոլոր գործածողներին հնչէ է նորա պակասութիւնները նկատել, ու մեր ուսուցիչների և ծնողների (որոնք գուցէ կ'իմանան իրանք ուսուցանել գրել և կարգալը) մէջ չկա՞ն շատերը գրքի լաւ ու վատը միմեանցից չորոշող. ի հարկէ կան: Աւելանալ այստեղ հարկաւոր ենք համարում խնդրել մեր ընթերցողին՝ չըձանձրանալ մինչև վերջը կարգաւ մեր նկատողութիւնները, թէ որ նրանք փոքր ինչ մանրակրկիտ երեւալու լինին, իմանալով՝ որ սրանք ունին իրանց խորհուրդը սկզբնական դասադրքի մէջ:

Ա.

Եթէ սկզբնական կրթութիւնը պարտաւոր է երեխաների գեղեցկասիրական զգացումն էլ միւսների հետ միասին զարգացնել, ուրեմն և աւելորդ չէ նկատել, որ «Մայրենի լեզուն», թղթի և գրքի կողմից գեղեցկութիւն չունի. թերթերի ծաւաւածքը խիստ տգեղ է — մէկը շատ աւելորդ միւսը շատ պակաս. որը, ի հարկէ, տպարանի մեղքն է: Գրքոյնները երեխաներին բաժանելիս՝ իւրաքանչիւրը նրանցից տհաճութիւն է յայտնում, որ իրան գրքի թերթերը մեծապատիկ են, ու խնդրումէ յետ առնել և տեղը ուրիշը տալ:

ձեալ անպտուղ մնում. մինչդեռ կարելի էր դրանց
գործածութեան իւրաքանչիւր կերպի համար ա-
ռանձին դաս կազմել ու այնպէս միանգամ ընդ
միշտ հնչեցնել գործը. Այդ դասերում ուսա-
նելու կանոնները ամեն ժամ պէտք են ու ամեն
ժամ սխալեցնում են երեխային. նորա համար
ամենագիտար կրթութիւնները դրանք են, որքան
էլ բացատրես. Այսպէս ուրեմն՝ ենթադրելով, ի
հարկէ որ մինչև Ի.Վ. դասը աշակերտը անպատ-
ճառ գաղափար կունենայ յայտնի և բացառի-
կառնի վերայ՝ պէտք էր այդ տեղից սկսել և շա-
րունակ մի քանի դասեր կազմել, թէ՛ 1) ի-
րազանայնորէ առաջ դրված հնչւումէ է- (այս
ինքն ինչպէս ռուսաց 10, երբեմն էլ ինչպէս ֆը-
րանս. 11) սղելով. Աւրիշ տեղերում - հնչւում-
է իւր ձայնով, այս ինքն՝ ինչպէս է. 2) յ
բառի կամ վանկի սկզբում հնչւումէ ինչպէս
է. 3) յ ձայնաւորներից յետոյ հնչւումէ
ինչպէս կիսաձայն յ (ռուսաց 11): 4) յ բա-
ռերի վերջը երբեմն էլ հնչւում է. 5) յ բաղա-
ձայներից առաջ հնչւումէ «յ» (յի): 6) յ ձայ-
նաւորներից առաջ հնչւումէ իւր ձայնով, այս
ինքն՝ «յ» (յի, Օն): 7) է և «միասին
հնչւումեն է» (ա): 8) է և «միասին - է»
(ե): 9) է և «միասին - է»: 10) բառերի
սկզբում էլ հնչւումէ միշտ էլ տառով է
գրվում, ուրեմն - բառի սկզբում երբեք
չի գրվում: Նոյնպէս և էլ հնչւումէ բա-
ղաձայներից առաջ միշտ էլ տառով կը գր-
վի: 11) Ձայնաւորներից յետոյ էլ հնչւումէ
միշտ - ու է գրվում, բացի «ւ»-ից, որից
յետոյ էլ է գրվում, որովհետեւ եթէ -
գրես - կը հնչվի: 12) «յ» և «յ» հնչ-
ւումներ միշտ «յ» ու են գրվում. և այլն. Եւ
այս ո՛չ մի քանի բառերով ցոյց տալ ու պրծնել,
այլ հարուստ և բազմազան կրթութիւններով
խոր տպաւորել երեխաների մտքում: Իսկ այս-
պիսի և այսչափ կրթութիւնները առանց ուրջի
դասակարգութեան միասին խոնաճ աւանդելը
հենց սկզբից շփոթում է երեխաներին: Այս ա-
սած կրթութիւնների խորհուրդը խիստ համա-
ռօտ մեկնուած կլինէր կամ իւրաքանչիւր դասի
վերնագրում և կամ ներքեւ, ծանօթութեան մէջ.
Իսկ մանրամասն բացատրութիւնը և հասկացնե-
լը, ի հարկէ, ուսուցչին կրթողութեւնը. Ի՞նչ «Մայ-
րենի Լեզուի», յառաջադասութեան մէջ ասած է.
թէ՛ «յ» «յ» (այդրեւարանը կանոնաւոր գործ-
է- իւրաքանչիւր է հետեւի վերջիւնը (կարգաւ և
գրել ուսուցանելու Հրահանգին) Հրահանգին, բայց
այնու ամենայնիւ այս ասած դասակարգութիւնը
անպատճառ պէտք էր:

Գ.

Գրքի ընթացքում մի քանի տեղեր, զո. 7,
11, 14, 19, 32, և 35 երեւնում կան աստ-

ղանշաններ, բայց նրանց մասին ոչ մի տեղ խօսք
չենք գտնում, թէ ի՞նչ խորհրդով են գրուած:

Գ.

Ո՞վ կտարակուսի, որ սկզբնական դասագիրքը
պէտք է երեխայի կրօնական - բարոյական զգաց-
մունքներն էլ զարգացնէ. փափուկ սիրտը նու-
րանից պէտք է ընդունէ մարդասիրութեան և ան-
յիշատարութեան սերմեր. Աւրեմն սկզբնական դա-
սագրքի շնորհաւոր պիտի խնամով քննուած լինի,
որ երեխան չը կարողանայ նորանից թշնամական
և նախատական հակումներ ստանալ, որոնք կեան-
քի մէջ պիտի վնասեն թէ իրան և թէ ուրիշնե-
րին. Անանքի մէջ շատ և շատ տեսակ երգեր, ա-
ռածներ և խօսակցութեան ձևեր կան, բայց ամե-
նը չէ կարելի անխտիր մտցնել դասագրքի մէջ.
Իսկ մտցնելուց յետոյ՝ անկարելի է, որ երեխան
ուշք չդարձնէ նրանց վերայ կամ ուսուցչիւն չը-
բացատրէ նրան. Այսպէս՝ չդիտենք, ի՞նչպէս
պէտք էր մեկնել Մայրենի լեզուի 8 Թում ղե-
տեղուած տուարածական երգի վերջին տողերը.
«Իմն ականեմ, առաջս անեմ. թշնամունս քա-
րերն անեմ»: այս ինքն երեկոյն իմ տաւարները
համարեմ, առաջս անեմ, քշեմ դէպի (ինչպէս
անում են առհասարակ) տուն, իսկ թշնամունս
տաւարները, եթէ նրանք իմի հետ խառնուած են
ու տէրը այնտեղ չէ - ջոկեմ ու քշեմ, խորտ-
նացնեմ դէպի քարերը, քարուտ անդերը, որ գը-
նան կորչեն, որովհետեւ թշնամունս են. Բայց կար-
ծում ենք, որ այսպիսի հասկացողութիւնը երե-
խային ոչ թէ անպէտք, այլ վնասակար է: Ցուա-
րածին ի՞նչ շահ է, որ թշնամուն տաւարները կոր-
չին, կամ նրան ի՞նչը կպակասի, որ իրանի հետ
նրանց էլ տուն քշէ. միթէ «քարերը անելով»
թշնամուն տեղիք չէ տալիս աւելի կամակորու-
թեամբ շարունակելու իւր թշնամութիւնը ու նու-
րան իրաւունք չէ տալիս փոխարէնը վերադարձ-
նելու. իսկ ընդ հակառակն՝ թշնամուն տաւարներն
էլ իրանի հետ տուն քշելով միթէ նրան չէր
պարտաւորել, որ նա էլ իւր կողմից թողնէ թըշ-
նամութիւնը ու փոխադարձ բարեկամութիւն ցոյց
տայ: Երեխային աւելի օգուտ է անյիշատարութեան
տողերը՝ քան վրէժխնդրութեան, որին որքան
նիւթ տաս, այնքան աւելի կզարգանայ երկու կող-
մից. առաժը ասում է «արիւնը արիւնով չեն
լուանալ»: Աւրիշ բան է ինքնապաշտպանու-
թիւնը և անձնական իրաւունքների սուրբ պահ-
պանելը, որը, առանց շփոթելու անօգուտ կրքերի
հետ, պիտի անպատճառ զարգացնել երեխայի
մէջ. - Նոյնպէս 13 Թում «Թուրքը զարի կըր-
ծելով կսատկի», առաժը, ի՞նչպէս մեկնենք սրան
երեխաներին. ինչու Թուրքը կսատկի, Էն էլ Է-
նէն էլ. միթէ նա ժողով չէ միւս մարդկանց հետ
հաւատար. - այս և այսպիսի հարցմունքները ա-

չակերտները շատ անգամ տուճարկում են, որոնց պէտք է բաւարարող պատասխան տալ: Բայց մենք ազգային ատելութիւն յիշեցնող խօսքերում ոչ մի բան չենք նշմարում մանրիկների համար, որք զեռ ևս անընդունակ են բարին ու շարժ միմեանցից որոշելու և դիտակցարար գործելու:

Ե.

Պեանքի մէջ այնպիսի բառեր կան, որոնք կամ զուր ժողովրդական են և կամ օտար ազգերից են առնուած. բայց ինչ և իցէ՝ հասարակութիւնը իրացրել է դրանց և ամենօրեայ կեանքում դրանցով է յայտնում իւր մտքերը: Չգիտենք, ի՞նչ խորհուրդ ունի այն տեսակ կենդանի բաները զուրա քցել և նրանց տեղը կամ զրարափոխ լցանել և կամ նորից տեղդնել: Լաւ էր, եթէ այդ բաները ընդհանուրի բերանում ժողովրդականութիւն ստանային. բայց երբ յայտնի է, որ դրանք մի քանի դրքերի մէջ անպատճառ մեռած կմնան՝ ի՞նչ շահ: Մենք խօսում և գրում ենք միտք հասկացնելու և ոչ թէ բառեր և առնանք սովորացնելու համար: Եթէ ուզում ենք որ գրականութիւնը ժողովրդական լինի, պէտք է նորան չը խորթացնենք ժողովրդի համար. ուսումնարանի լեզուն էլ չի կարող յանկարծ ժողովրդից հեռանալ — իրան կենդանի աղբիւրից: Շատ դժուար է հենց առաջին նուագում երեսանների ձեռքը տալ մաքուր գրականական լեզուով գրած դասագիրք, մանաւանդ որ՝ այդ գրականական լեզուն ինքն լատ ինքեան զեռ ևս մաքուր չէ. դաւառական գեղեցիկ բառերից և ձևերից, որոնք բազմաթիւ են, դարչել պէտք չէ. այդ մաքրողութիւնը ժամանակի գործ է, և նա կը հոգայ:

Զ.

Պ. Ն. Տէր — Ղևոնդեանցը Մայրենի Լեզուի յառաջարանի է. երեսի ծանօթութեան մէջ խըղրումէ նոյն ձևով դասագիր շինող պարոններին չը վեր առնել այն հատուածները, որոնք ինքը թէեւ ժողովրդական կեանքից առնելով մշակել և յարմարացրել է մանկական հասակին, նոյնպէս և այն համարները, որոնք կազմուած են իրանից. բայց ցաւումենք, որ մի որ և իցէ կերպով չէ ցոյց տալիս, թէ որո՞նք են այդ ազգային հոգիները: Մենք կարծում ենք, որ ժողովրդական կեանքում եղած նիւթերը ընդհանուրի սեպհականութիւնն են, ուրեմն և ամեն մարդ կարող է վեր առնել նրանց ու իւր ճաշակին յարմար մշակել. միթէ մէկ ուրիշը իրաւունք չունի մի և նոյն Տ. — Ղևոնդեանցի հատուածները ուղղակի իրանց աղբիւրից — կեանքից վերցնել, եթէ երբ և իցէ պէտք լինի, իհարկէ, ունի: Իսկ երբեք

(Տէր — Ղևոնդեանցի) հոգիները, որոնք յայտնի չեն, արգելել ամենեւին աւելորդ է, որովհետեւ նրանք մէկ հիմնական աշխատութիւն չեն ու մէկ նշանաւոր ամբողջութիւն չեն ընծայում մեզ: Մանաւանդ որ՝ պետութեան օրէնքներով թող տուած է ամենայն գրքերից հոգիները հանել, չենք ասում հոգիները: Այլ և բաց ի դրանից՝ մեր մէջ յառաջադիմութեան միջոցները այնքան քիչ են՝ որ հազիւ թէ կարելի է առանց միմեանցից բան վեր առնելու և սովորելու գործ տեսնել, նշանակումէ՝ այդպիսի արգիլքները անխորհուրդ են: Ահա՛ ինքը Տէր — Ղևոնդեանցն էլ հոգիները հոգիները չէ՛ր հոգիները: Մայրենի Լեզուի մէջ:

Է.

Պ. Տէր — Ղևոնդեանցը մայրենի լեզուն վերայ աշխատակիս պէտք է աչքի առաջի ունենար Պատաստանի բոլոր (համարնա) Հայերին, որոնք դանդան տեղեկում և հանգամանքներում լինելով ու զանազան բարբառներով խօսելով՝ հետեւաբար էլ զանազան պահանջներ ունին: Մայրենի լեզուի մէջ հայերի բառեր և ոճեր կան, որոնք ամենայն տեղերի համար միապէս հասկանալի չեն. ուրեմն անպակ լաւ կանէր պարոնը, եթէ դասագրքի հետ մի. սին, ինչպէս արեւ է Պաշտօնակին, մի առաջնորդական գրքով էլ յօրինած լինէր ուսուցիչների և ծնողների համար: Այդպիսի մի գրքովի մէջ՝ Ա) կրպարունակվէր դասագրքի յառաջարանը, որն որ այնտեղ ամենեւին աւելորդ է, և էլի ուրիշ խորհուրդներ և մատնացուցութիւններ գրքի գործածութեան մասին: Բ) Հիմնաւորապէս կը մեկնուէին հանելուկները և դժուար հասկանալի առածները: Եւ Գ) այն բառերը, որոնք ուղղակի դրաբարից են առնուած՝ կը մեկնուէին ուսուցիչներին և կարելի եղած բարբառներով, իսկ այն բառերը, որոնք որ և իցէ բարբառից են վերցրած կամ նոր են լոյս ընկած — դրաբառով, ուսուցիչներին և ուրիշ բարբառներով: Եւ այս առածները կանէր, ի հարկէ որքան մեր ներկայ գրութիւնը կրնարէր, անհնարին բան չենք պահանջում: Այսպէսով դասագրքի մէջ քիչ մութ տեղեր կմնային ու գրքովը սակաւթիւ օրինակներով կըտպուէր դասատուների համար միայն: Իսկ երբ այդ չի արել անպատճառ պիտի փակագծեցում կամ ներքեւ ծանօթութիւնների մէջ նշանակէր շատ բառերի և դարձուածների բաղմանկողմանի, որքան հնարաւոր էր, մեկնութիւնը: Թէ չէ՝ հիմի այնպիսի տեղեր կան մայրենի լեզուին մէջ, որ ուսուցիչները իրանք էլ հաստատ չեն հասկանում. բայց ինչպէս վերել էլ ասացինք, սկզբնական դասագրքի մէջ անխորհուրդ բան չըպէտք է մտցնել, իսկ մտցրածը անպատճառ պիտի հասկանալ և հասկացնել: Առանց առաջնորդական գրքի անկարելի է մայրենի լեզուն գործ

ածել, ինչպէս պէտք է առանց նրան. սորա զիջեցիկ պահանջները անիրազօրեմբ կը մնայ. ի հարկ է աւելնել չեն կարող ուղղակի Ռուսներէն կարգաւ և նրանից օգուտ քաղել:

Ը.

Պ. Տէր — Ղևոնդեանցի «Մայրենի Լեզուն», Ուշինսկու «Մայրենի Լեզուի», թարգմանութիւնն է, թէ և թարգմանիչը և պ. Ս. Պ. (իւր յօդուածում) մի միայն «Լեռնադուրիւն», են ասում, իրր թէ մի քանի զուտ ռուսական բաները բաց թողնելով և նրանց տեղը զուտ հայկական գնելով թարգմանութիւնը թարգմանութիւն չէ մընում, այլ լսկ հետեւողութիւն է դառնում. չըզիտներ, էլ ուրիշ ինչ կերպ կարող էր անել մէկ ուրիշ անձն, և նրա աշխատութիւնը էլ որն էր լինելու: Դասագիրք շինելու դժուարութիւնը մի քանի բառեր կամ յօդուածներ աւելի կամ պակաս գնելը չէ, այլ ծնանելը այն ոճը, եղանակը, պլանը, որով հեղինակը կամենում է մի որոշեալ նպատակին հասնել: Ուշինսկու հիմնադիր կարգով դասաւորած նիւթերը ձեռաց պատրաստի ունենալով այնքան էլ շատ դժուար չէր մէկ դասագիրք հրատարակել, ու պէտք էր հանրամարդկային տեղեկութիւնները առանց տեղափոխութեան և այլայլելու նրանից վեր առնել, որ ստրկական նմանողութիւն չէ, այլ խոհմութիւն. որովհետեւ Ուշինսկու պէս մանկավարժ մենք չունինք և շուտով էլ չենք կարող ունենալ:

Պ. Ն. Տէր — Ղևոնդեանցի «Մայրենի Լեզուի», ընթերցարանի իւրաքանչիւր №-ի սկզբում զետեղուած բառերի դասաւորութեան մէջ տեղափոխութիւններ է այս ինքն բառերը յետ ու առաջ դրել կամ երբեմն բաց թողել: Ի հարկէ, մեզ անպէտք համարված կամ դժուարաթարգմանելի բառերը պէտք էր բաց թողնել և ընդհանրապէս բնագործ չըգտնուած ու մեզ հարկաւոր բառերը ներս մտցնել. մեր խօսքը դրան վերայ չէ. մենք միայն ասում ենք, թէ ինչ որ թարգմանել է, պիտի առանց տեղափոխութեան թարգմանուէր, որ կարելի լինէր թարգմանութիւնը բնագործին հետ բաղդատել, եթէ զիցուք թէ, մէկը կամենար: Պատահում է, որ ռուսներէն իմացող աշակերտներ ցանկանում են իրանք քննել, տեսնել, թէ որ բառը որպէս է թարգմանած (կամ ընդհանրապէս՝ հայերէն իմացողներ...), բայց այդ ասած տեղափոխութեան պատճառով չեն կարողանում: Բաց ի նորանից՝ պ. թարգմանիչը բաց է թողել մի քանի յօդուածներ, որոնք հեռուութեամբ կարելի էր թարգմանել և որոնք երեխաներին խիստ դուրեկան պիտի լինէին. բայց թէ

ինչու. — չըզիտներ: Եթէ ռուսաց կեանքից առած լինելուն պատճառով է խորհուրդ չունի, որովհետեւ մի և նոյն կեանքից առած ուրիշ յօդուածներ էլ թարգմանել է, ու սրանք քան նրանց վատ չէին երեւելու երեխանց աչքում: Իսկ եթէ երկարութիւնից կամ զրբոյրը մեծացնելուց խորհուրդ համար — դարձեալ անխորհուրդ, որովհետեւ այս Մայրենի Լեզուն, առաջին տարվայ համար նշանակուած լինելով՝ կարելի է ասել, որ շատ կարճ է և քիչ նիւթեր է պարունակում ընթերցանութեան համար. ու եթէ այս յօդուածներն աւելի շատ յօդուածներ էլ մտցրած լինէին՝ դարձեալ մի տարվայ պաշար չէին տալու: Ամենօրեայ իրական փորձերը ցոյց են տալիս, թէ մի տարում որքան կարող են անցնել հնչական ոճով սկսած երեխայքը:

Ուշինսկու գիրքը, որից թարգմանել է պ. Տէր — Ղևոնդեանցի, յայտնի բան է, մշակած գործ է ուրեմն այն բոլոր բաները, որոնք առանց լեզու խեղաթիւրկելու կարելի էր հայերէն չինել, պէտք է թարգմանուէին հարադասութեամբ և առանց միտք փոփոխելու. բայց այնպիսի դարձուածները և միտք յայտնելու ձևերը, որք սեպհական են ռուսին, ի հարկէ, անպատճառ պիտի հայանային: Մայրենի Լեզուին մէջ տեղեր և մտքեր կան, որոնք այլայլուած են, իսկ կարող էին հարադասութեամբ թարգմանուած լինել. այս ևս, մեր կարծիքով նպատակ չունի:

Թ.

Եւս ընդհանուր նկատողութիւններից յետոյ մենք սկսում ենք Մայրենի Լեզուի իւրաքանչիւր №-ը առանձնապէս աչքից անցկացնել, և փոքր ի շատէ մատնացոյց լինել թերութիւններին, որոնք մեր կարծիքով, կան նորանում:

(Շարունակել)

Ս Խ Ա Լ

Ըմնագրոյս 273 բզ երեսում դրուած Գեղարդիւն-Լեւոն Շիրակայ (շարունակութիւն) վերնագիրը սխալմամբ և կրկին եղեալ է յերեսն 277: